ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մայիսի 19-ին՝ ուրբաթ օրը, *Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի դահլիճում տեղի ունեցավ կոմիտեի վարչության երրորդ պլենումը։*

Ներկա էին կոմիտեի վարչության անդամները, մամուլի և մտավորականության ներկայացուցիչներ, արվեստագետներ, հասարակական գործիչներ։

Պլենումին ներկա էր նաև ու ելույթ ունեցավ Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Առաջինը, որն Իր ելույթում ասաց.

«Իմ անկեղծ խոսքն ու գնահատանքն եմ հայտնում դեպի այն մեծ գործը, որ սկսեց Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն երեք տարի առաջ և քայլ առ քայլ առաջ ընթացավ։ Լայն հորիզոն է բացվում հայրենիքի և սփյուռքի մեր եղբայրների, քույրերի կապերի ամրապնդման ճանապարհին։ Պետք է շնորհակալություն հայտնենք Հայաստանի կառավարությանը, որ հնարավորություն ստեղծեց նման կազմակերպության ծնունդ առնելուն։ Շատ ուրախ եմ տեսնելով կոմիտեի արձանագրած հաջողությունները։ Վստահ եմ, որ նա է՛լ ավելի կծավալի իր ազգաշեն գործունեությունը։ Բոլորի մեկ հիմնական նպատակն է՝ հնարավորին չափ հայ պահել արտասահմանի հայությունը և շատերին փրկել ուծացման ճանապարհից։ Ընդունեցեք լավագույն մաղթանքներս»։

***

Մայիսի 21-ին՝ կիրակի.—*«Սկիզբն Յարութեան Կիւրակէից։ Յիշատակ Եղիայի մարգարէին». Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց արժ. տ. Հակոբ քհն. Հակոբյանը։*

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Մայիսի 22-ին՝ երկուշաբթի.—*«Տօն Սրբոց Կուսանացն Հռիփսիմեանց». Օրվա տոնի առթիվ հանդիսավոր ս. պատարագ մատուցվեց ս. Հռիփսիմեի տաճարում։ Պատարագեց և քարոզեց վանահայր տ. Պողոս վրդ. Նշանյանը՝ «Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի» բնաբանով։*

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան հատուկ արարողություն՝ ս. Հռիփսիմեի տաճարի վերանորոգության բարերարներ Սրվանդ Հյուսիսյանի և Օննիկ Մանուկյանի ծնողաց և հանգուցյալ հարազատների հիշատակին։

***

Մայիսի 23-ին՝ երեքշաբթի.—*«Տօն Սրբոյ Կուսանացն Գայիանեանց». Օրվա տոնին ս. Հռիփսիմեի տաճարում պատարագ մատուցեց արժ. տ. Հովհաննես քհն. Մարությանը։*

Մայիսի 25-ին՝ հինգշաբթի.—*«Տօն սրբոյն Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին». Ս. Շողակաթի տաճարում պատարագեց արժ. տ. Նշան քհն. Բեյլերյանը։*

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան հատուկ արարողություն՝ տաճարի նորոգության բարերար, տեր և տիկին Սուրեն և Շաքե Գալենտերյանների ծնողների հիշատակին։

***

Մայիսի 25-ին՝ հինգշաբթի.—*Այսօր երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետի նախագահության ներքո, գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի լիակատար նիստ, որին մասնակցում էին նաև գեր. տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը և Գերագույն հոգևոր խորհրդի ամբողջ կազմը՝ նորընտիր անդամներով։ Ն. Ս. Օծությունը Գերագույն հոգևոր խորհրդի կազմը համալրեց նոր անդամներով՝ հրավիրելով Հյուսիսային Կովկասի հայոց թեմի առաջնորդ տ. Պարգև եպս. Գևորգյանին, Երևանի գրականության թանգարանի տնօրեն Սարգիս Մելիքսեթյանին և գրակա-*

նագետ Հովհաննես Թոփուզյանին՝ անդամակցելու Գերագույն հոգևոր խորհրդին։

Նիստը բացելով, Վեհափառ Հայրապետը ողջունեց նորընտիր անդամների ներկայությունը՝ մաղթելով նրանց հաջողություն։

Վերջում գեր. տ. Պարգև եպիսկոպոսը, նախագահ Ս. Մելիքսեթյանը և Հովհաննես Թոփուզյանը շնորհակալություն հայտնեցին Վեհափառ Հայրապետին՝ իրենց հանդեպ ցույց տրված բարձր վստահության համար, և խոստացան յուրովսանն աշխատել Մայր Աթոռ ս. Էջմիածնի և հայ եկեղեցու պայծառության համար։

***

Մայիսի 27-ին՝ շաբաթ.—«Տօն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի վիրապէն». Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը և քարոզեց ս. Գրիգոր Լուսավորչի կյանքի և գործունեության մասին։

Այսօր երեկոյան Մայր Աթոռ վերադարձավ հոգ. տ. Նարեկ վրդ. Շաքարյանը, որը հին տոմարով Զատկի տոնի առթիվ ուխտի էր գնացել ս. Երուսաղեմ։

***

Հունիսի 3-ին՝ շաբաթ.—Հոգևոր ճեմարանում սկսվեցին 1966—1967 ուսումնական տարվա ամավերջի քննությունները, որոնք տևելու են մինչև հունիսի 14-ը։

***

Հունիսի 10-ին՝ շաբաթ.—«Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ». Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Մկրտիչ քհն. Մկրտչյանը։

***

Հունիսի 11-ին՝ կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողապալյանը և քարոզեց «Վերինք ամենայն այսօր ցնծացէք ընդ մեծապայծառ փառսն Սեպուհոյ գերազանց լերինն» բնաբանով։

Ս. պատարագին ներկա էր մեծ թվով ուխտավորություն ԱՄՆ-ից և Սուդանից։

Ս. պատարագին ներկա էր նաև Վեհափառ Հայրապետը։

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, բանաստեղծ Եղվարդ Գոլանճյանի մահվան 10-րդ տարեդարձի առթիվ, ինչպես նաև նրա բարեպաշտ կնոջ՝ Աղրինեի և վաղամեռիկ որդու Մանուելի հիշատակին.

***

Հունիսի 12-ին՝ երկուշաբթի.—Այսօր առավոտյան ժամը 11.40-ին Մոսկվա մեկնեց բուլղարահայ թեմական խորհրդի ատենապետ Օննիկ Ասլանյանը, որն ուխտավորաբար Մայր Աթոռում էր գտնվում հունիսի 2-ից։